

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ
ՏԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԳԻՏԱԺՈՂՈՎ ՀՐԵԱԿԱՆ ՎԱՆ ԼԻՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ցեղասպանության 90-ամյակի առիթով Ապրիլյան ոգիկոչման Սաղմանական Սիացյալ Հանձնախումբը կազմակերպել էր «Ցեղասպանություն 20-րդ դարում, 90 տարիի հայոց ցեղասպանությունից անց» թեմայով երկօրյա գիրածողով, որը մեկնարկեց հինգշաբթի, ապրիլի 7-ին, Վան Լիր ակադեմիական հաստափությունում։ Գիրածողովին մասնակցում էին Ֆրանսիայից, Անգլիայից և Գերմանիայից ժամանած հայազգի և օրար գիրենականներ և պարմարաններ, ինչպես նաև իրենց ցեղասպանագերներ և պարմարաններ։

Գիրածողովի առաջին նիստի բացումը կարարեց Հոգրոսովի և Ցեղասպանության ինսպիրուտի բնօրեն, ցեղասպանագեր Խրայել Չարենի։ Բացման իսութիւն եկույթով հանդիս եկավ պրոֆ. Ցեղողդաս Բոեր՝ «Նարավի՞ր է կանխարգելել Ցեղասպանությունը» թեմայով։ Ժանախոսն իր խորում շեշտեց. «Աշխարհը շարունակում է ճանաչել Հայերի ցեղասպանությունը, որի պարզառով ցեղասպանությունների կրկնության հավասականությունը շատ բարձր է մնում։ Եթե աշխարհը ժամանակին ճանաչեր և դարձապարփեր Հայոց ցեղասպանությունը, ապա դեռի չեն ունենա Դրեանների ողջակիցումը, Կամքուայի և Ռուանդայի ցեղասպանությունները, և այսօր ցեղասպանություն դեռի չեր ունենա Դարֆուրում (Սուդան)։ Ճանաչումը կարևոր է ենթագայում ցեղասպանության հանցագործությունը կանխելու համար։ Նարգելի բանախոսն իր եկույթը եղրափակեց հեքվայլ նախադասությամբ. «Ցեղասպանությունը ճանաչելը կրկին ցեղասպանություն է» և, իբրև կանխարգելման առաջնակարգ և կարևորագույն պայման, առաջարկեց 20-րդ դարի առաջին՝ «Հայերի ցեղասպանության ճանաչումն ու դարձապարփումը։

Ապա եկույթ ունեցավ Կլոր Մուրաֆյանը՝ «Պարմական հետանկար. 90 տարի հայոց ցեղասպանությունից անց» թեմայով։ Պին Մուրաֆյանն իր եկույթում հակիրճ կերպով ներկայացրեց հայոց պահանջապահ և կարևորագույն պայման, առաջարկեց 20-րդ դարի առաջին՝ «Հայերի ցեղասպանության ճանաչումն ու դարձապարփումը։

Այսուհետև եկույթ ունեցան Ռեյմսն Գլորզյանը և Նիմեր Կայզերը, որոնց թեմաններն էին համապատասխանարար «Հայկական ցեղասպանության դեմքեսական ասպեկտները» և «Միություն և զարգացում. Սիրիսիստերը և Հայկական ցեղասպանությունը»։

Դոկտոր Արա Սարաֆյանի գեկուցումը նվիրված էր Ամերիկայի Միացյալ Նահանգների արխիվներում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութերին, դեսպան Մորգենթաուի օրագրություններին և անձնական փարբեր արխիվներին։

Դոկտոր Արա Սարաֆյանը դմորենն է Ցեղասպանության ուսումնասիրությունների Կոմիտաս հասպափության։ Նա գրավում է Հայոց ցեղասպանությանը վերաբերող օրար փասփաթայթերի և աղբյուրների հավաքմանը և հրաժարակմամբ։ Մեկ տարի առաջ նրա ջանքերով լոյս է դրսել Ձուրբիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան (1913-

1916 թթ.) Նենքի Մորգենթաուի օրագիրը, որ մանրամասնորեն նկարագրվում է Հայերի ցեղասպանությունը: Նա հրատարակել է նաև Թուրքիայում Միացյալ Նահանգների հյուպարու (1913-1916 թթ.) Արրահամ Ելքոսի հիշողությունների արձանագրությունները: Արա Սարաֆյանը նախընդրում է զիրական շրջանառության մեջ նմել ամերիկյան արխիվները, քանի որ դրանք, ըստ Սարաֆյանի, «... գրված են անզերեն, և գրված են այնպիսի մի երկրի դեսպանների, հյուպարունների և միսիոններների կողմից, որ մինչև 1917 թիվը չեղ մասնակցում Համաշխարհային Ա պարերազմին, ուստի արխիվներում արձանագրված է միայն իրականությունն ականարես վկանների կողմից»:

Գիրաժողովի երկրորդ նիսքը սկսվեց Գևորգ Դինթիյանի բացման խոսքով: Նա իր խոսքում շեշտեց, որ շատ կարևոր է միջնակարգ կրթական և համալսարանական հասպատություններում պարմության դասընթացներին ցեղասպանության որպես առարկայի դասավանդումը: Ապա զոհունակություն հայփնեց, որ Խորայելում ցեղասպանության դասավանդման արդյունքում աշակերտության և ուսանողության մեծ մասը փեղյակ է Հայոց ցեղասպանությանը, հակառակ այն փասդի, որ մինչև օրս Խորայելը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Այնուհետև հանդես եկավ պարմարան Եաիր Օրոնը: Նա քննադարեց Հայկական ցեղասպանության հանդեպ Խորայելի վարած մերժման և ուրացման քաղաքականությունը: Նա քննադարեց նաև Խորայելի նախկին վարչապետ Շեմոն Պերեսին, որը Թուրքիայում հայրարարել էր, թե Տրեական հոլորոսքը չի կարելի համեմատել հայկական կուրորածների հետք: Նա նաև քննադարեց այսօրվա իշխանություններին, որոնք չեն հրավիրել Հայաստանից ներկայացնություններ՝ մասնակցելու Եաղ Վաշեմի նոր թանգարանի բացման արարողությանը, այն դեպքում, եթե Հայաստանի ներկայացնությունները, քանախոսի խոսքուվ, «... հրավիրվածների կարգում պեսքը է լինեին առաջինը»: Նա իր ելույթը եզրափակեց հերթևալ նախադասությամբ: «Ես ամազում եմ, որ մինչև այժմ Խորայելը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Ի դեպք, Եաիր Օրոնը հեղինակն է: «Ուրացում Խորայելը և Հայկական ցեղասպանությունը» վերնագրով վերջինս լույս դրեսած գրի:

Եաիր Օրոնի բանախոսությանը հաջորդեց Եռնահի Վիեցի ելույթը: Նա իր ելույթում ներկայացրեց Երուսաղեմի հայության ծավալած գործունեությունը Հայոց ցեղասպանության ճամացման վերաբերյալ:

Այնուհետև ելույթ ունեցան դոկտոր Ամոս Գոլդենքը և ուարի, դոկտոր Արիել Փիկարդը:

Նշենք, որ զիրաժողովին մասնակցում էր Երուսաղեմի հայոց Պապրիարք S. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյանը, ինչպես նաև Երուսաղեմի հայոց Պապրիարքության միաբաններ և մեծ թվով հայ և օդար ուսանողներ ու անհարիներ:

ԳՐՏԱԺՈՂՄՎ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄՐԱՆՈՒՄ

Ցեղասպանության 90-ամյակի առիջիվ Ապրիլյան ոգեկշման Սաղմանական Միացյալ Հանձնախմբի կազմակերպած «Ցեղասպանություն 20-րդ դարում՝ 90 տարի Հայոց ցեղասպանությունից անց» թեմայով զիրաժողովը շարունակվեց ապրիլի 11-ին, Ժառանգավորաց վարժարանի սրահում:

Գիրաժողովը սկսվեց Գևորգ Շինօլյանի բացման խոսքով, որին հաջորդեց առաջին նսղաշրջանի նախազահող Ավերքի Աղազարյանի ելույթը, ապա ելույթ ունեցավ Բերգենի նամալսարանից նորվեգացի դոկտոր Շնգեր Մարի Օկենհոգը, որը ներկայացրեց հայ ժողովի բարեկամ Բողի Թջորնի կենսագրությունը և Արևմտյան Հայաստանում նրա ծավալած գործունեությունը: Այսուհետև ելույթ ունեցավ դոկտոր Ռեյմոնդ Գևորգյանը, որը խոսեց Հայոց ցեղասպանության մեջ Բեհանդին Շաքիրի ունեցած դերի մասին: Վերջին բանախոսը դոկտոր Կլոդ Մութաֆյանն էր, որ ներկայացրեց թուրքական ուրացման և ժըս գողական քաղաքականության որդեգրած նոր ուղիները:

Գիրաժողովի երկրորդ նիսքը սկսվեց Բիրզեթ համալսարանի պրոֆեսոր Ռոզեր Շիրօրի բացման խոսքով: Այսուհետև ելույթ ունեցավ «Թերթա Սանթա» պարբերականի խմբագիր հայր Փոլ Սիլվեստրը, որը ներկայացրեց Հայոց ցեղասպանության մասին Ֆրանչիսկյան եղբայրների կողմից կադարած գրառումները: Դոկտոր Ազապի Նասիբյան-Էքմերճյանը բանախոսեց «Քրիտանական մարդասիրական օժանդակությունը և Հայոց ցեղասպանությունը» թեմայով: Մադրիդի համալսարանի պրոֆեսոր Կարմեն Լոփես Ալոնսոն գեկուցում կարդաց «Ցեղասպանության հիմնադիրն այսօր» թեմայով:

Փոքր դադարից հետո գիրաժողովի երրորդ նսղաշրջանը բացվեց դոկտոր Փետրա Շեղյանի բացման խոսքով, ապա հանդես եկավ գերմանացի դոկտոր Շիմար Զայգերը՝ «Գերմանիան և Հայոց ցեղասպանությունը» թեմայով: Նա մանրամասն ներկայացրեց Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի ունեցած դերը և բերած մասնակցությունը: Խոկ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար նա արդար համարեց հայ ժողովրդի պահանջը Թուրքիայի Եվրոմիության անդամակցելու պայման դարձնել Հայոց ցեղասպանության ճանաչումը: Նսղաշրջանի վերջում ելույթ ունեցավ դոկտոր Գայի Սեյփարթը: Նա խոսեց Թուրքիայում Գերմանիայի հյուպատոս Վոլգեր Ռուլերի կյանքի և գործունեության մասին: Գիրաժողովի վերջին նիսքը սկսվեց այն վարող դոկտոր Ժորժե Ավազյանի խոսքով: Նա նախ հիշեց Շիրլեիր «Ո՞վ է հիմա հիշում հայերի ցեղասպանությունը» խոսքը և, շարունակելով իր միտքը, նշեց, թե Հայոց ցեղասպանության հանդեպ պետքությունների ցուցաբերած անբարերությունն ու հանդուժողությունը ծնեց նոր ցեղասպանություններ: Խոկ դրանց կանխարգելման միակ նախապայմանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է»: Նոյյն համարեքսպով ելույթ ունեցավ նաև հրեա պապմարան Եաիր Օրոնը՝ «Խարայելը և Հայերի ցեղասպանությունը» թեմայով՝ ավելի անդրադառնալով Խարայելի ուրացման և ջընդունման պարբառներին: Ապա ելույթ ունեցավ Եռնա Վեհըր՝ «Հիշողություն և Հայոց ցեղասպանություն» թեմայով: Գիրաժողովն ավարտվեց հայր Նայի Աթիկի և Արիս Եպիսկոպոս Շիրվանյանի ելույթներով:

Համոզված ենք, որ այս գիրաժողովն անայսման իր դրական արձագանքը կգրին Խարայելու բնակվող հրեա և պաղեստինցի ժողովուրդների շրջանում:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՐԲՈՅ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ ԵՎ ՍԳՎԱՆԴԵՍ ԺԱՌԱԳԱՎՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄՐԱՆՈՒՄ

Այս փարի Երուսաղեմում Հայոց Մեծ եղենի հիշաբակության ծևռնարկները և սգահանդեսը մեկ օրով հետաձգվեց և նշվեց ապրիլի 25-ին, քանի որ ապրիլի 24-ը համընկել էր Ծաղկազարդի գրոնին:

Երկուշարթի, ապրիլի 25-ին, Ս. Պատարագ մաքուցվեց Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում: Պատարագին մասնակցում էին Խարայելում հավաբարմազրված օգարազգի դեսպաններ և հյուպատոսներ, դիվանագետներ, գարբեր հարանվանությանց հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ: Պատարագը մաքուցեց Գերշ. Տ. Արիս եպս. Շիրվանյանը: Սրբազն Հայրը նաև քարոզեց հայերեն և անգլերեն լեզուներով: Պատարագի ավարտին, Պատրիարք Սրբազն Հոր հանդիսապետությամբ, կապարվեց հոգեհանգստյան արարողություն Հայոց Մեծ եղենի մեջ ու կես միջին անմենյ նահաբակների հոգիների հանգըստության համար: Այնուհետև կազմվեց սգո թափոր և հոգևոր հայերերի ու հարյուրավոր մասնակիցների ուղեկցությամբ թափորն ուղղվեց դեպի Ս. Փրկչի վանքում գրնվող Արարայի հուշարձան, որ ևս կապարվեց հոգեհանգստյան արարողություն: Արարողության ավարտին ելույթ ունեցավ պրև Սերոք Սահակյանը, խոսելով ազգային գաղափարախոսության և դրանով մեր նոր սերունդներին կրթելու կարևորության մասին:

Երեկոյան ժառանգավորաց վարժարանի սրահում դժողի ունեցավ Եղենի գոհերին նվիրված սգահանդես: Ներկաները նախ մեկ րոպե լուրջամբ հարգեցին Եղենի նահաբակների հիշաբակը, որին հաջորդեց Պատրիարք Սրբազն Հոր արքասանած աղոթքը: Ապա ելույթ ունեցան Նոյեմի Նալբանդյանը (ՇՕՄ), Հակոբ Փանոսյանը (ՇԵՄ) և Արամ Խաչապրյանը (ԵԿԲՄ): Նրանց ելույթներում մի ընդհանրություն կար, և դա կոչ էր ողջ հայությանը՝ պայքարել հանուն Հայոց ցեղասպանության համընդիանուր ճանաչմանը և հասնել նրան, որ աշխարհն ընդունի Հայոց ցեղասպանությունը և դարպարփի այն իրեն ծանրագոյն հանցագործություն:

Փայլուն կերպով և լրացվորիչ կապարմամբ հանդես եկավ ժառանգավորաց վարժարանի երգչախումբը, ապա բանախոսնեց պրօֆ. Լևոն Շիրինյանը: Լսոր բանախոսի, հանցագործությունը չի կարող ունենալ վաղենության ժամկետը, և յուրաքանչյուր նման արարք պետք է դադապարփվի, իսկ մեղավորները պետք է արժանանան խսդագոյն պարզի: Այնուհետև Գևորգ Շինդիյանն ընթերցեց Վահագն Տափրյանի խոսքը Հայոց ցեղասպանության 90-ամյակի առթիվ, ապա Հարութ Պաղամյանի կապարմամբ Պարույր Սևակի «Նոյանց եղեննական» բանասիրներությունը:

Սգահանդեսն ավարտվեց Պատրիարք Սրբազն Հոր փակման խոսքով և «Հայր մեր»-ի երգեցողությամբ ու «Պահպանիչ»-ով: